

Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ կը նախատեսէ ամերիկեան եւ բրիտանական զինուորական իրաքի մէջ: Ան երէկ լիբանանեան «Սաֆիր» օրաթերթին թղթակցին ըսաւ, որ ներխուժող ուժերը պիտի չկարենան ամբողջական հակազդի տեսարկէ իրաքը, Սոյնիսկ եթէ պայման գրուին: Միւս կողմէ, Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուսարաք, որուն երկիրը 300 միլիոն տոյարի օժանդակութիւն պիտի ստանայ Միացեալ Նահանգներէն, ըսաւ, որ պատերազմին հետեւանքը շատ անելի վտանգաւոր պիտի ըլլայ քան պատերազմը:

Իսկ Սուրիոյ միւս կողմէ շէյխ Ահմէտ Քաֆթարօ կոչ ուղղեց անձնապահական գործողութիւններ կատարելու ամերիկացի եւ բրիտանացի ներխուժողներու դէմ:

### ԴԱՇՆԱԿԻՑ ՌԻՇԵՐԸ ԲԱՅԻՆ ՆԱԵՒ ՀԻՒՍԻՍԻ ԾԱԿԱՏԸ ԱՍԵՐԻԿԱՅԻՔ ՅԱԻԵԼԵԱԼ ՁԻՆՈՒՈՐ ԿԸ ԳՈՐԾՈՒՂԵՆ ԻՐԱՔ

## ՄԻՆՉ ԻՐԱՔՅԻՔ ԲՈՒՈՆ ԴԻՍԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՑՈՒՑԱԲԵՐԵՆ, ԱՍԵՐԻԿԱՅԻ ՁԻՆՈՒՈՐՆԵՐ ՍԽԱԼՍԱՍԲ ԻՐԱՐՈՒ ՎՐԱՅ ԿԸ ԿՐԱԿԵՆ

Աւելի քան 350 զոհ եւ 3600 վիրաւոր: այս է առաջին շաբթուան հաշուեկշիռը Իրաքի դէմ յայտարարուած պատերազմին, զոր կ'առաջնորդեն Միացեալ Նահանգներ եւ Բրիտանիա: Իրաքի առողջապահութեան նախարար Ումիտ Մուպարաք, որ մամլոյ ասուլիսի մը ընթացքին կը խօսէր, ըսաւ, որ ասիկա մօտաւոր պատկեր մըն է: Ան աւելցուց, որ զոհերուն ու վիրաւորներուն մեծ մասը մանուկներ, կիներ եւ տարեցներ են: Մուպարաք դաշնակից ուժերը ամբաստանեց Նասիրիայի մէջ հիւանդանոց մը ուժեղացումը, իսկ Նաթաֆի մէջ ալ բժշկական կեդրոն մը:

Իրաքեան քաղաքային պաշտպանութեան զործակալութեան ընդհանուր տնօրէնը իր կարգին յայտնեց, որ մայրաքաղաք Պաղատի երէկուան ուժեղացումը ուժեղացումն էր 44 վիրաւոր խլած



Հիւսնի Պաշարի մէջ քիւրդ գիւնեալ մը (փեշմերկա) կ'ապահովէ ամերիկացիներուն գալուստը


է: Ան ըսաւ, որ ուժեղացումն իրաքեան բանակը հազար զոհ տուած է Նաթաֆի ճակատամարտին:

Մինչ այդ, դաշնակից ուժերը կը շարունակեն յարձակումներ իրականացնել Պաղատ: Այդ ճամբուն ամերիկեան ու բրիտանական օդանավային ուժերը կ'արձակեն իրաքեան արդիւնքները:

### ԱՄԱԼԻ ԱՆԴԱՄ ԵՐԿՈՒ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ ԿԸ ՀԵՌԱՑՈՒԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՇԱՐՔԵՐԷՆ

Ամալ Շարժումի ղեկավարութիւնը իր շարքերէն հեռացուց ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պալաւի, երկրագործութեան նախարար Ալի Ապտալլան, երեսփոխան Մոհամէտ Ապու Համտանը, ինչպէս նաեւ Ռիատ Սալիտ Շալաւը, Քասէմ Ալի Համապը եւ Ալի Սաատալլա Չըալթըրը:

Այս որոշումին իբրեւ պատասխան Պալտուն երէկ իրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշեց, թէ Ամալ Շարժումը բազմաթիւ շքանշաններով կարգարած է իր կուրծքը եւ նկատել տուաւ, որ Շարժումին վիճակը հեռացնելու որոշումը նաեւ կը նկատէ շքանշան մը: Ան մաղթեց, որ այս որոշումը Շարժումին որդեգրած քաղաքական նոր ուղղութեան կը ծառայէ եւ ոչ թէ կարգ մը անհատներու շահեռուն ու քմայքներուն:



Պաղատի կեդրոնը գտնուող բնակարանային շէնք մը դարձեալ կոյր ուժեղացումի թիրախ

ներ հերքեցին սակայն ամերիկեան ուժերու մէկ բանբերին յայտարարու-

րին զոհեր վիրաւորներ իրենց զինակիցներուն իսկ կրակով: Ամերիկեան զինուորական աղբիւրներ հաղորդեցին, որ Նասիրիայի մօտ իրաքեան յարձակումի մը ընթացքին, ամերիկեան ուժեր իրարու վրայ կրակած են: Բանբեր մը ըսաւ, որ զինուորները վիրաւորուած են «բարեկամական կրակով»: Բարձրաստիճան զինուորական մը հաստատեց, որ զիշերային ճակատամարտին անորոշուած մը տիրած է, պատճառ դառնալով միջազգային: Ամերիկեան աղբիւրները չըսին, սակայն, թէ վիրաւորները ի՞նչ վիճակի մէջ կը գտնուին:

Դաշնակից ուժերը երէկ բացին նման հիւսիսի ճակատը: Ականատեսներ յայտնեցին, որ ամերիկեան օդանավեր էջք կատարեցին քրտարակ շրջաններուն մէջ: Ամերիկացի մեծ թիւով զինուորներ տեսնուեցան նաեւ քրտական շրջանը Պաղատի իշխանութեան ենթակայ շրջանէն բաժնող սահմանագիծին վրայ: Ըստ կարգ մը աղբիւրներու, ամերիկացի բաժնեալ 30 հազար զինուոր կ'առաքեն Իրաք, յատկապէս թաղային կռիւներու համար մարզուած:

Հարաւի ճակատին վրայ կռուող բրիտանական ուժերուն աղբիւրները հաղորդեցին, որ Պալտայի մուտքին կործանած են իրաքեան 14 հրասայլեր: Բրիտանացի բանբեր մը ըսաւ, որ հրասայլերու շարասիւն մը Պալտային դուրս գալով կ'ուղղուէր դէպի հարաւ: Հրասայլերուն մէկ մասը յարձակողական զիջք բռնած է բրիտանական ուժերուն դէմ, որոնք յաջողած են կործանել:

Շարք՝ էջ 10

### ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՓԱՐԻՉԻ ՄԷՉ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ՇԻՐԱՔԻ ՀԵՏ, ԻՍԿ ԱՅՍՕՐ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՉ ԺՈՂՈՎ ՄԸ ԿԸ ԳՈՒՄԱՐԷ ՓՈՒԹԻՆԻ ՀԵՏ



Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ Փարիզի «Էլիզե» նախագահական պալատին մէջ հանդիպում մը ունեցաւ Ֆրանսայի նախագահ ժաք Շիրաքի հետ: Քննարկուեցան իրաքի դէմ ամերիկեան պատերազմին առնչուող հարցեր, շրջանային իրադարձութիւնները եւ լիբանանեւֆրանսական երկկողմանի յարաբերութիւնները բարելաւելու հեռանկարները:

Մէկուկէս ժամուան հանդիպումէն ետք վարչապետ Հարիրի «Էլիզե»-ն մեկնումի պահուն պատասխանեց թղթակցներու հարցումներուն: Վարչապետ Հարիրի շեշտեց, որ Եւրոպայ կատարած իր այցելութիւնը շրջանային իրադարձութեան շուրջ տեսակետներ փոխանակելու նպատակով էր եւ արեւելոց, որ Եւրոպական երկիրները իրաքի տագնապին նկատմամբ լստակ կեցուածք ճշդած են, կը փորձեն լաւ յարաբերութիւններ մշակել Լիբանանի եւ Սուրիոյ հետ, դիմարաւելու համար շրջանին սպառնացող բոլոր մարտահրաւերները:

Վարչապետ Հարիրի Փարիզէն կ'ուղղուի Մոսկու, ուր այսօր հանդիպում մը պիտի ունենայ Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութինի եւ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանովի հետ:

### ՌՈՒՍԻԱ ԴԱՐՁԵԱԼ ԿՈՉ Կ ՈՒՂՂԷ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱԴՐԵՑՄԱՆ

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով երէկ Միւնխէն. պատկերասփիւռի կայանին հետ հարցազրոյցի մը ընթացքին յայտարարեց. «Իրաքի մէջ պատերազմը վայրկեան առաջ պէտք է դադրի եւ տագնապը լուծուի միայն ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի ճամբով»:



Իվանով

կարելի կը դառնայ, այլապէս շատ յուսահատական պիտի ըլլայ իրավիճակը ոչ միայն Միացեալ Նահանգներու, այլեւ ամբողջ աշխարհին համար»:

### «ԱՓԱՉԻ» ՄԸ ԵՒՍ ՎԱՌԱՌՆՈՒԱԾԷ ԻՐԱՔԻ ԿՈՂՄԷ

Երէկ, քաթարեան «ժազիրա» պատկերասփիւռի կայանը ցուցադրեց ամերիկեան «Ափաչի» ուղղափոխ մը, զոր վար առած են իրաքցիք: Կայանը նաեւ ցուցադրեց առանց օդաչուի օդանավ մը, որ դարձեալ վար առնուած է իրաքեան բանակին կողմէ:

Փենթագոն ցարդ չէ հաստատած լուրը: Նշեցք, որ ասիկա երկրորդ «Ափաչի»ն է, որ վար կ'առնուի Իրաքի մէջ:

### ԵՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՄԱՐՏ 31ԻՆ ՊԻՏԻ ԼՍԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՉԵԿՈՒՑՈՒՄ ՄԸ

Մթնաշաբաթի մէջ, Մարտ 31էն Ապրիլ 4 պիտի սկսի Եւրոպական Խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի զարմանալի նստաշրջանը: Հայաստանի Ազգային Ժողովի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ, Եւրոպական Խորհուրդի մէջ Հայաստանի պատուիրակութեան ղեկավար Յովհաննէս Յովհաննիսեան երէկ յայտնեց, թէ առաջին օրուան նիստին իսկ պիտի ներկայացուի Հայաստանի նախագահական ընտրութիւններուն վերաբերող զեկուցում մը: «Չեկուցման շուրջ քննարկումներ տեղի պիտի ունենան, բայց որեւէ որոշում պիտի չորդեգրուի: Եւրոպական Խորհուրդը հաւանաբար նաեւ որոշէ աշխուժ մասնակցութիւն ունենայ Հայաստանի խորհրդարանական յառաջիկայ ընտրութիւններուն: Իսկ Յովհաննիսեանի տեղի պիտի ունենան ընդհանուր քննարկումներ՝ Հայաստանի երկու ընտրութիւններուն շուրջ», դիտել տուաւ Յովհաննիսեան:

Ինչ կը վերաբերի Լեռնային Ղարաբաղի տագնապին գծով Եւրոպական Խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի զեկուցող թերի Տէյվիսի շրջանայցելութեան, որ յետագուեցաւ Բրիտանիոյ խորհրդարանին մէջ իրաքեան տագնապին շուրջ քննարկումներուն պատճառով, ըստ Յովհաննիսեանի, այցելութիւնը հաւանաբար տեղի ունենայ Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններէն ետք:

Պրիւքսէլի մէջ Մարտ 24-25ին տեղի ունեցած էր Եւրոպական Միութիւն - Հայաստան խորհրդարանական համագործակցութեան յանձնաժողովի 5րդ ներթափանց նիստը, որուն մասնակցած էր Հայաստանի Ազգային Ժողովի պատուիրակութիւնը: Յովհաննէս Յովհաննիսեանը հաղորդեց, որ նիստի աւարտին ընդունուած է 28 կէտէ բաղկացած միացեալ արձանագրութիւն մը, որ անդրադարձած է Լեռնային Ղարաբաղի տագնապին, Հայաստանի նախագահական ընտրութիւններուն, քաղաքական եւ տնտեսական զարգացումներուն: Յովհաննիսեանի հաստատումով, նիստին օրակարգին վրայ ընդհանրապէս եղած են տնտեսական, քաղաքական հարցեր, որոնք ընդգրկուած են Հայաստան - Եւրոպական Միութիւն երկխոսութեան ծիրէն ներս: Նիստին անդրադարձ եղած է նաեւ Լեռնային Ղարաբաղի տագնապին, որացի երկիրներու հետ Հայաստանի յարաբերութիւններուն, մարդկային իրաւանց հարցերու, նախագահական վերջին եւ խորհրդարանական յառաջիկայ ընտրութիւններուն:

### ՓԱՍՏԵՐ ՌԻՆԻՆԸ, ԹԷ ԻՐԱՔԻ ՄԷՉ ՌՈՒՍ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ ԿԸ ԳՈՐԾԵՆ ԳԵՏՆԻ ՎՐԱՅ

ԿԸՍԷ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԴԻՄԱՍԿԵՏ ՄԸ

ՄՈՍԿՈՒԱ, 27 (ԱՅՓ).- Մ. Նահանգներ յաւելեալ փաստ ներկայացուցած են ռուս պաշտօնատարներու, թէ ռուսական անձնական ընկերութիւն մը ուղղակի բանակցութիւններ ունեցած է իրաքի հետ՝ պինակային կարգ մը սարքերու վաճառքի գծով, յայտնած է ամերիկացի բարձրաստիճան ղեկավար մը:

Ռուսական «Ալիաքսանդրա» ընկերութիւնը հերքած է, թէ իրաքի ծախած է սարքեր, որոնք կը խանգարեն արբանեակային նշաններ, որոնք կ'օգտագործուին հրթիռներ եւ ռազմական օդանավեր առաջնորդելու համար:

«Ռուսիք նաեւ փաստեր, զորս ներկայացուցած ենք ռուսներուն, թէ ռուսեր գետնի վրայ կը գործեն», ըսած է ղեկավար մը:

Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլ յայտնած է, թէ իտալուստացած է իր ռուս պաշտօնակիցին՝ Իկոր Իվանովին, թէ քննութիւն պիտի բացուի վաճառքին մասին:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը թէն հաստատած է, թէ Չորեքշաբթիի ժողովը հեռաձայնային խօսակցութիւն մը տեղի ունեցած է Փաուըլի եւ Իվանովի միջեւ, սակայն անիկա պինական վաճառքին չէ ակնարկած:

Իվանով նախապէս յայտնած է, թէ Մոսկու «Ռուսիայի ծանրակշիռ յանցանք» պիտի նկատէ որեւէ յայտնաբերում, որ ցոյց կու տայ, թէ ռուսական ընկերութիւններ բռնաբարած են իրաքի դէմ ՄԱԿի պատժամիջոցները:

### ՄԻՆԻՍՏՐ ԵՒ ՄԵԼՀԵՄ ՔԱՐԱՄ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԻՐԱՔԵԱՆ ՏԱԳՆԱՊԻՆ ԱՌՆՉՈՒՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ



Ելեմուտքի նախարար Ֆուատ Սինիրա երկկ ընդունեց խմբագիրներու սենտիքայի նախագահ Մելհեմ Քարամը, որուն հետ քննարկեց Իրաքի դէմ ամերիկեան պատերազմը եւ Լիբանանի վրայ անոր հաւանական ազդեցութիւնները:

Հանդիպումէն ետք Քարամ կատարեց յայտարարութիւններ, որոնց մէջ ըսաւ, որ Սինիրայի հետ հանդիպումը սովորական հանդիպում մըն էր: Քարամ շեշտեց, որ Սինիրա խստիւ կը դատապարտէ Իրաքի դէմ պատերազմը եւ անոր միակ նպատակը կը նկատէ Իրաքեան քարիւղին իւրացումը եւ Իրաքի ճամբով՝ ամբողջ արաբական քարիւղին, ինչ որ կը մերժուի ամբողջ աշխարհին կողմէ:

Սինիրա շեշտած է նաեւ, որ հարկ է շարունակել կառավարութեան բարեկարգումի ծրագիրը եւ աւելցուցած, որ «Փարիզ-2» վեհաժողովին Լիբանանի խոստացուած նիւթական օժանդակութիւնները հանգրուան առ հանգրուան պիտի հասնին Լիբանան:

### ՊԸՐՐԻ ԵՒ ՔՈՒԷՅԹԻ ԴԵՄՊԱՆԸ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԻՐԱՔԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երկկ ընդունեց Լիբանանի մէջ Քուէթի դեսպան Ալի Սալիտը, որուն հետ քննարկեց Իրաքի դէմ պատերազմին վարգացումները:

Միւս կողմէ, Պըրրի ընդունեց ճարտարաւեստի նախարար Ժորժ Աֆրամը, որուն հետ քննարկեց ճարտարարուեստի մարպէն ներս հարցեր, ինչպէս նաեւ Իրաքեան պատերազմի իրադարձութիւնները:

Պըրրի նկատել տուաւ, որ Իրաքի վրայ ամերիկեան յարձակումին նպատակն է իշխել շրջանին եւ յափշտակել անոր հարստութիւնները, ինչպէս նաեւ վերստին զծելու համար պաղեստինեան քարտէսը, առաջնորդելով սինական շահերով:

Պըրրի վորակցութիւն յայտնեց Իրաքեան դիմադրութեան եւ նշեց, որ Գաիթի մէջ տեղի ունեցած արաբ արտաքին գործոց նախարարներու վեհաժողովը գործնական լուծում մը առաջարկեց Իրաքեան հարցին:

Պըրրի ընդունեց նաեւ երեսփոխան Նասէր Քընտիլը, որուն հետ քննարկեց շրջանային վարգացումները:

### ՄԱՀԱԶԴ

Հոգը. Տէր Աւետիս Արդ. Իփրաճեան  
Տէր եւ տիկին Յովհաննէս Սրկ. Իփրաճեան եւ զաւակունք

Օրդ. Վարդուհի Իփրաճեան  
Տէր եւ տիկին Սարգիս Հալաճեան եւ զաւակունք  
Խաչերեան ընտանիք  
Պէօյիքեան ընտանիք  
Թոթովեան ընտանիք  
Հարմանտարեան ընտանիք  
Իփրաճեան զերդաստան  
Կը գուժեն իրենց մօր, զօրանչին եւ ջրով՝

### ՏԻՐԱՄԱՅՐ ՄԱՐԻ ԻՓՐԱՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ 25 Մարտին:  
Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ կէսօրէ ետք ժամը 3:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:  
● Ներկայ ընդունիլ իրրեւ մահագր:  
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Հանքաշ, Ուրբաթ 28, Շաբաթ 29 եւ Կիրակի 30 Մարտին:

### ՆԱԽԱԳԱԿ ԼԱՀՈՒՏ ԼՈՒՍԱՐՁԱԿՆԵՐԸ ԿԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԲԵՄԻՆ ՎՐԱՅ

Նախագահ Վորէմի Լահուտ երկկ լուսարձակները վերադարձուց ներքին լիբանանեան հարցերուն վրայ, նկատել տալով, որ Իրաքի դէմ գործադրուող ամերիկեան բռնարարները պէտք չէ գրաւեն Լիբանանի քաղաքական կեանքի բոլոր ուղղորդումները, եւ պէտք է ամրապնդել

վերջին շրջանին Լիբանանի ներքին կեանքին մէջ ձեւաւորուած միասնականութիւնը եւ երկխօսութեան տրամադրութիւնները:  
Նախագահ Լահուտ շեշտեց, որ խորհրդարանը միակ դաշտն է քաղաքական գործունէութեանց աշխուշ ժամանակ:  
Նախագահ Լահուտ

շեշտեց, որ երկխօսութիւններու դաշտը ընդարձակ է, յատկապէս ինչ կը վերաբերի սահմանադրական հաստատութիւններուն:  
Նախագահ Լահուտ վերահաստատեց, որ պատրաստ է ամէն ճիգ գործադրելու՝ նպաստելու համար երկրին ներքին միասնականութեան եւ զերազոյն շահերուն:

### ՆԱԽԱՐԱՐ ՊԱՅՏՈՒՆ Կ'ԱՐԺԵԻՈՐԷ «ՍԱՃԻՐ»Ի ՄԻՒՆԱԿՆԵՐԷՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏԻՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պայտուն երկկ նկատել տուաւ, որ «Սաֆիր» օրաթերթին հետ Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի ունեցած հարցազրոյ-

ցին ընթացքին կատարուած յայտարարութիւնները յոյսի է կորովի մեծ իթան է նկատել տուաւ, որ «Սաֆիր» օրաթերթին հետ Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի յայտարարութիւնն է:

որ նախագահ Ասատ շեշտած է, թէ Սուրիա մեծ օժանդակութիւն կը յատկացնէ Լիբանանի քաղաքական առողջութիւնը ոչ մէկ կ'ընայ կերտել, բացի լիբանանցիներէն:

Հ. Բ. Մ. - Հ. Ե. Ը. «ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶԵԱՆ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ  
Կը ներկայացնէ  
ՅԱԿՈՒԲ ՊԱՐՈՆԵԱՆԻ  
«ՊԱՂՏԱՍԱՐ ԱՂԲԱՐ» Ը  
Հովանաւորութեամբ՝  
Շ. Ե. Ը. Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
Բեմադրութեամբ՝  
ԵՐՈՒՆԴ ՂԱԶԱՆՃԵԱՆԻ  
(Հայրենի վաստակաւոր բեմադրիչ)  
Տեղի կ'ունենայ 28, 29, 30 Մարտ, 3, 4, 5, 6, Ապրիլ 2003, երեկոյեան ժամը 8:30ին, ցերեկոյն 6 Ապրիլ ժամը 4:00ին, «Յակոբ Տէր Սելբոնեան» քաղաքատնային մէջ:  
● Տոմսերը ապահովելու համար դիմել՝ Շ. Ե. Ը. Ի գրասենեակէն, «Տեմիրճեան» կեդրոն, վարչական անդամներն եւ ելոյթի օրերը կիշէն:

ՀԱՅ ԱԻԵՏ. Փ. ԵՒ Է. ԹՈՐՈՍԵԱՆ  
ՄԻԶՆԱԿԱՐԳ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ  
Կը ներկայացնէ  
Թատերագիր - Բեմադրիչ՝ Ռոպէրթ Առաքելեանի  
**Խեղացի Մարդը**  
Երաժշտական Կատակերգութիւնը  
(հետեւողութեամբ Յովհ. Թումանեանի Անխելք Մարդը Հեքիաթին)  
Երաժշտութեան Հեղինակ՝ Վեր. Ներսէս Պալապանեան  
Ուրբաթ 28 Մարտ 2003, Յովհ. Պողոսեան Թատերատար  
Պուրճ Համուտ  
Աշակերտական՝ կ.ա. ժամը 11.00  
Երեկոյեան՝ ժամը 8.30  
Շաբաթ, 29 Մարտ 2003, երեկոյեան ժամը 7.00-ին  
Հետիկի սրահի մէջ, Այնճար  
Մուտքը տոմսով

ՀԱԿԱՊԱՏԵՐԱԶՄ ՅՈՅՅԵՐԸ ԵՐԷԿ ԱՆՑԱՆ ԽԱՂԱԴ  
Իրաքի դէմ ամերիկեան պատերազմը դատապարտող ցոյցերը երկկ շարունակեցան Լիբանանի մէջ՝ դէպի Աուրար երիտասարդական եւ ուսանողական քայլարշաւներով, ուր անոնք ամերիկեան դեսպանատան մօտ խմբուեցան:  
Յոյցին մասնակիցները մեծ մասամբ Հրկապալայի հետեւորդներ էին, սակայն չէին կրէր որեւէ դրօշակ կամ պաստառ:  
Ուշագրաւ էր, որ երկուսն ցոյցերը անցան խաղաղ եւ որեւէ բախում չարձանագրուեցաւ ապահովական ուժերուն հետ:  
Միւս կողմէ, Էսքուայի շէնքին առջեւ, դպրոցականներ պահանջեցին կասեցնել իրաքցի ժողովուրդին դէմ ամերիկեալիտանական բռնարարները:  
Սայտայի մէջ Աւետարանական դպրոցներու աւելի քան 2000 աշակերտներ կապակերպեցին ցոյց մը:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՌԻՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (ՀԵՆՈՄ)  
**ԶՐՈՅՑ - ՀԱՆԴԻՊՈՒՄ**  
Նիւթ՝  
**ՔՐԻՍՏՈՆԵԱՅ - ԻՍԼԱՍ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆԸ**  
Կը ներկայացնէ՝  
**ՊՐ. ԺԱՆ ՍԱԼՄԱՆԵԱՆ**  
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 29 Մարտ 2003, երեկոյեան ժամը 6:30ին, միութեանս կեդրոնին մէջ, Մայրավանք, Անթիլիաս: Սիրով հրաւիրուած են բոլոր հայ համալսարանականները:  
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**ՃԱԽՈՒ 3ԱՐԿԱԲԱԺԻՆ**  
● Ամառուի շրջան, 2 մեջատեցեակ, հիւրասենեակ, ճաշասենեակ, 2 բաղնիք: Դիմել՝ հեռ. 01-250483 եւ 03-308639:  
**ԿԸ ՆՈՒԻՐԵՆ**  
● Տը եւ տիկին Յարութիւն Բիւսիւրեան 200.000 Լ. ո.՝ ԲԱՇԼԻ Ծերանոցին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՌՈՒԲԷՆ ԶԱՐԳԱՐԵԱՆ» ՄԱՍՆԱԳԻՂ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «Ռ. ԶԱՐԳԱՐԵԱՆ»  
**ՇԱԲԹՈՒԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ**  
Մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ՝  
**ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ԶԵՆԱՐԿ**  
Շաբաթ, 29 Մարտ 2003, երեկոյեան ժամը 7:00ին:  
ՃԱՆՈՐ. ԶԵՆԱՐԿԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵԱՅ «ԱԶԱՍԱՍԱՐՏ ԱԿՈՒՄԲԻ ԶՈՒՄԱՏԱՐԵԱՆ» ՄՐԱՇԽՆ ՄԵՋ  
ՄՈՒՏԸ ԱԶԱՏ  
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**PHOTO NERSES**  
(Արագ սպասարկութիւն - որակաւոր լուսանկարներ)  
ՀԻՄՆԱԳՐՄԱՆ  
**25 ԱՄԵՆԱԿԻ ԱՌԻԹՈՎ**  
**36 photo ֆիլմի ԳԿԱՐԱԽԱՆՈՒՄԸ**  
միայն **8,000 Լ. ո.**  
(Kodak Royal քարտի վրայ տպուած եւ արդիական DIGITAL մեքենայի միջոցաւ) ... ԵՒ ՍԱՅԵԸ ՆԱԿԵՐ  
Լուսանկարի նոր ֆիլմ մը + ալպոմ մը + ԳԿԱՐԻ INDEX մը  
Կը նկարենք փոքրերու լուսանկարներ ԶԱՍԿՈՒՄՆ յատուկ յարգարանքով  
PHOTO NERSES: Պուրճ Համուտ, Զաղաքակտարանի փողոց «Սանթրո ԱՐԻՆ»-ի դիմաց:  
Հեռ. 01 - 261858 եւ 01 - 255992

ԱՅՍՕՐ՝ ՌԻՐԲԱԹ, 28 ՄԱՐՏ 2003, ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 8:30ԻՆ «ԵՈՒՆԵՍԵՕ»Ի ՄՐԱՇԽՆ ՄԵՋ  
**ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ**  
**ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԵ ԿԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ**  
ԱՅՏԻՆ  
AFHIL

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

ՎԱՐԳՈՒՀԻ ՎԱՐԳԵՐԵՍԵԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԸՄԲՈՇԽՆՈՒՄԻ ԵՐԵԿՈՅ ՄԸ ԵՒՍ ՊԱՐԳԵՒԵՅ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ

Օգտուելով հիւրաբար Լիբանանի անհատներին հայրենի վաստակավոր դերասանուհի Վարդուհի Վարդեանի ներկայությամբ և համապատասխան հարգանքներով հարգելի անհատներին հարգանքներով հարգելի անհատներին հարգանքներով...



Սեդա Խոսրոզյանի բարի գալուստի խօսքին ետք բեմ բարձրացավ Վարդուհի Վարդեանը, որ Լիբանանի կրթության նախարարի համարձակ 40-րդ տարեկանը հրապարակեց «Մանկավարժական հարցազրույց» թատերախումբի հրատարակած «Մանկավարժական հարցազրույց» թատերախումբի հրատարակած «Մանկավարժական հարցազրույց» թատերախումբի հրատարակած...

Շուրջ մեկուկես ժամ տևողությամբ խնամքով մշակույթով լի շաբաթը, Վարդուհի Վարդեանի մեկնաբանած բաժինները հանրածանօթ թատերախումբի ռեպերտուարում մեծ իր ստանձնած դերերին, ամսուքեց հայ գրականության արձակ ու չափածոյ գործերին և հանդիսատեսները հաղորդակցող հարձույթը իր թատերական բազմամյա ու արդիւնաւետ կեանքին ցույց տալու համար հանդիսատեսին հետ: Ան ամսուքեց Ա. Ահարոնյանի «Վարդ»-ն, ինչպես նաև՝ Ա. Բահալյանի, Միսնաթյանի և Պարոյր Սեւակի բանաստեղծություններին:

«Կեանքի նման մերք ուրախ ու մերք տխուր» ընդմիջումներով հանդիսատեսին թատերական ու բեմական ըմբռնումի իսկական պահեր պարզեցնող Վարդուհի Վարդեանի «Վարդ»-ը հայրենի վերածնունդի մասին ընթացքին:

ԶԵՐ ՏԵՍԱԿԵՏԸ ԿԱՐԵՒՈՐ Է «Վաճառ Զայն»-ը ուղղակի ձայնասփռող շաբաթական յայտագիրը՝ ՏԵՍԱԿԵՏ Երեքշաբթի, 1 Ապրիլ 2003, կեսօրը ետք ժամը 5:00ին, ԳԻՐԸ՝ ԱՂԱՆԴՆԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՅ ՎՏԱՆԳԸ ՄԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԵԶ Կը խօսին՝ ՔՈՅՐ ԹԵՆՈՒԹԵՒՄԵ ԳԵՏՐՈՍԵԱՆ ՀՈԳՇ. ԳԵՂԱՐԳ ԱԲՂ. ՔԻՒՄՊԵՔԵԱՆ ՊԱՏՈՒԵԼԻՆՇԱՆ ՊԱԳՊԱԼԵԱՆ 3այտագիրին ամբողջ տևողության հեռաձայն-նեցը «Վաճառ Զայն»՝ 01-267657 եւ 01-241199 թիւերուն եւ տուրք ձեռք կարծիքը:

28 ՄԱՐՏ - 3 ԱՊՐԻԼ 2003 ԵՐԿԻՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ «ԵՐԿԻՐ» ՀԱԲԱԹԱԹԵՐԹԻ •Որսնապարական խնդրադրույթների ժամանակը էջ 7 •Կաշառակները դեռեւս անհասանելի են էջ 9 •Կը հրատարակուի հայոց պատմության քառասորերակ էջ 10 •Շայ մշակույթի Եղեռնը Լախիզեանունը շարունակուում է էջ 11 •Ծուղակ՝ մարզի համար էջ 14

Հ. Բ. Ը. Մ. - Հ. Ե. Ը. «ՊԱՂՏԱՍԱՐ ԱՂԲԱՐ»-Ի ԲԱՅԱՈՒԿ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ «ՎԱՐԱՍ ՓԱՓԱԶԵԱՆ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻՆ ԿՈՂՄԵ

Երեկ, երեկոյեան ժամը 20:30ին, Հ. Բ. Ը. Մ. - Հ. Ե. Ը. Վահրամ Փափազեան» թատերախումբը, հովանաւորութեամբ Հ. Ե. Ը. Վ. Կեդրոնական Վարչութեան եւ բեմադրութեամբ հայրենի բեմադրիչ փրոֆ. Երուսէլ Ղապանճեանի, Պուրճ Համուտի «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերախումբին մէջ ներկայացուց հայ մեծանուն երգիծագիր Յակոբ Պարոնեանի «Պաղտասար աղբար» հանրածանօթ գործը:

Վերջին ժամանակաշրջանին աշխուժութիւն ցուցաբերող լիբանանահայ թատրոնը երեկուան ներկայացմամբ նոր որակ մը ստացաւ: Դերակատարները, հետեւելով հայրենի բեմադրիչին ցուցմունքներուն, գերազանցօրէն կատարեցին իրենց դերերը: Ընդգծելի եւ ողջունելի է «Վահրամ Փափազեան» թատերախումբին մակարդակ ու որակ ունեցող էլոյթը, որ պատիւ կը բերէ ընդհանրապէս հայ կեանքին եւ մասնաւորապէս լիբանանահայ գաղութին:

Ներկայացման ասարտին, «Թատրոնի Միջազգային Օր»-ուան (27 Մարտ) առիթով, հայրենի բեմադրիչ Երուսէլ Ղապանճեան պարգևատրուեցաւ Հ. Բ. Ը. Մ. - Հ. Ե. Ը. Վ. յատուկ յուշանուէրով: Փրոֆ. Ե. Ղապանճեան իր արտասանած երախտագիտական խօսքին մէջ վեր առաւ թատերական գործիչներու թատրոնին համար ցուցաբերուած ցոյցաբերութեան կարեւորութիւնը եւ իր ուրախութիւնը յայտնեց վերջին ժամանակաշրջանին լիբանանահայ թատերական կեանքին աշխուժացման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍՏԱՍԱՐԱՆ ՆԱՐԵԿԱՅԻՆ ԴՈԿՏ. ՄԵԴԱ ՏՏՏՈՅԵԱՆԻ ԱԿՆՈՅՈՎ

Գրիգոր Նարեկացիի մահուան 1000ամեակին առիթով, երեկ երեկոյեան ժամը 7:00ին, Հայկազեան համալսարանին մէջ անգլերէն դասախօսեց Ամերիկեան համալսարանի դասախօս ղոկտ. Սեդա Տատոյեան, մերկայացնելով Նարեկացիի գրական եւ իմաստասիրական կտակը:

Խօսելով Նարեկացիի ժամանակաշրջանին տիրող ընկերային - կրօնական շարժումներուն մասին, ղոկտ. Տատոյեան անդրադարձաւ Նարեկացիի կեանքին եւ գործերուն:

Ան մերկայացուց «առասպելական» Նարեկացիին, որ ճանչցուած է իբրեւ համեստ հոփոյ, ծառայ, բուժող, հրաշագործ եւ Սուրբ: Ինչ կը վերաբերի Նարեկացիի գրական գործերուն, ղոկտ. Տատոյեան մասնաւորաբար կեդրոնացաւ անոր գլուխ գործոցին՝ «Մատեան Ողբերգութեան» վրայ, նշելով, որ ամբողջ հայ գրականութեան մէջ ամենէն աւելի հրատարակուած եւ տարածուած գիրքն է անիկա: Դասախօսը շեշտեց, թէ «Մատեան Ողբերգութեան»ը հայկական կրօնական մշակույթին մէջ սրբակար մը կարելի է նկատել:

Դոկտ. Տատոյեան անդրադարձաւ նաեւ Նարեկացիի իմաստասիրական - աստուածաբանական կտակին: Ան Նարեկացիի գաղափարները մերկայացուց վերածնունդի իմաստասերներու գաղափարներուն համահունչ եւ հետո՛ւ միջնադարեան մտածողութեան:

Այս իմաստով, ղոկտ. Տատոյեան կեդրոնացաւ մարդ անհատին մասին Նարեկացիի մտածողութեան, անոր «Ես»ի շեշտադրումին, սիրոյ գաղափարը տարբեր մակարդակներու վրայ բացատրելու անոր ճիգերուն եւ մասնաւորաբար մարդուն եւ Աստուծոյ միջեւ յարաբերութեան մասին անոր եզակի գաղափարներուն եւ պոռթկումներուն վրայ:

Յաճախ մէջբերումներ կատարելով Նարեկացիի գործերէն, ղոկտ. Տատոյեան խօսեցաւ նաեւ Նարեկացիի գրական տաղանդին մասին: Այս իմաստով ան մասնաւորաբար շեշտեց, թէ Նարեկացիին հիմնադիրն է հայկական քնարական աշխարհիկ գրականութեան:

ՊԵՆՋԻՆԻ ՍԱԿԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՆՈՒԱԶԻԼ

Երրորդ շաբաթը ըլլալով, պենզինի եւ մագուլթի սակերը կ'արձանագրեն նուազում, հետեւելով ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Մոհամէտ Ապաւելի Համիտ Պայտունի որոշումներուն: Թիթեղ մը պենզինը արձանագրած է 400 լ. ոսկիի նուազում, իսկ մագուլթը՝ 100 լ. ոսկիի: Հետեւաբար, վառելանիւթի նոր սակացոյցն է՝ Առանց կապարի 98 օքթան պենզին՝ 21,900 լ. ու, առանց կապարի 95 օքթան պենզին՝ 21,100 լ. ոսկի, առանց կապարի 92 օքթան պենզին՝ 20,700 լ. ոսկի, առանց կապարի 90 օքթան պենզին՝ 20,100 լ. ոսկի, քարիւղ՝ 10,500 լ. ոսկի, իսկ մագուլթը՝ 10,900 լ. ոսկի:

Arabic header with logos and text: البيروت, القاهرة, النصار, السفير, الامارات, المستقبل

Տեղական օրաթերթերը իրենց երեկուան թիւով յուսարձակի տակ առած են դաշնակից ուժերուն կողմէ Իրաքի վրայ յարձակումները, իրաքեան ընդդիմութիւնը եւ ժողովուրդին կացութիւնը:

Թերթերը նաեւ լուսարձակի տակ առած են Լիբանանի տարբեր շրջաններուն մէջ տեղի ունեցող ցոյցերը եւ խռովարար դեպքերը: «Սաֆիր» օրաթերթը հարցալրոյց մը ունեցած է Սուրիոյ նախագահ Պաշշար Ասադի հետ. ան քսած է, թէ թշնամիները պիտի չյաջողին տիրապետել մարտնչող Իրաքի տեղի ունեցող լոյկ փոթորիկ մը չէ, այլ ծրագրուած հարուած, ուղղուած բոլոր արաբներուն: Ըստ նախագահին, ինքի-ինքուան տակաւին բաւական լաւ լիճակի մէջ է եւ պէտք չէ մտաւախութիւններ ունենալ այդ ուղղութեամբ, հակառակ արաբական դատադրութեան, իսկ խաղաղութեան քարտէսը պարզ երեւակայութիւն մըն է եւ ոչ աւելի: Ան նշած է, թէ Լիբանանի հպորտները կը գտնուի իր ընդդիմութեան մէջ, իսկ Պրեքթէշտալա պատգամ մը փոխանցեց իր ժողովուրդին:

Իրաքեան պատերազմին մասին թերթը գրած է, որ Պուշտմէրիկացիներուն դիմելու կը յուսայ վերականգնելու անոր հետ խաղաղութեան հարաբերութիւնը: Պուշտմէրիկացիները կը քարտէսը պարզ երեւակայութեան մէջ կը կատարեն Քիւրտիստան, Իրաք կը բանայ հիւսիսային ճակատը, իսկ Փենթագոն կը ծրագրէ հարաւի մէջ վերջ տալ դիմադրութեան, նախքան Պաղտաստ մուտքը, գրած է «Նահար» օրաթերթը:

Ըստ թերթին, լուստագնապ մը ծագեցաւ Գահիրէի եւ Դամասկոսի միջեւ: Սուրիոյ մէջ եզրիտական դեպիստան առջեւ տեղի ունեցած ցոյցին պատճառով: Սուրիոյ նախագահը աւելի ցօրաւոր ընդդիմութիւն կը նախատեսէ ամերիկեան ուժերուն դէմ: Թերթը նշած է նաեւ, թէ իրաքեան բանակը մուտք պիտի չգործէ Իրաք առանց Միացեալ Նահանգներու հետ այս հարցը համակարգելու: Պաղտաստի շրջափակումը երկար պիտի չտեւէ եւ Սատասմոնուր պիտի գայ ռուսական միջնորդութեամբ, գրած է թերթը:

«Տէլի Սթար» նշած է, թէ Յովհաննէս Պողոս Բ. պապը մեծ վիշտով լսեց Լիբանանի մահուան լուրը: «Քիֆահ Արապի»-ի համաձայն, ամերիկացի սպայ մը կը հաստատէ ամերիկացի պիստոլներուն իրենց ինքնաշարժներին փախուստ տալու լուրը եւ մտահոգութիւն կը յայտնէ անոց ճակատագիրին մասին:

Իր ժողովրդավարութիւնը Իրաք փոխարեւէ առջ, Ռաշիդ Նուրի կը ձեռնարկէ Լիբանանի միջազգային լուրերը: Իր ժողովրդավարութիւնը Իրաք փոխարեւէ առջ, Ռաշիդ Նուրի կը ձեռնարկէ Լիբանանի միջազգային լուրերը: Իր ժողովրդավարութիւնը Իրաք փոխարեւէ առջ, Ռաշիդ Նուրի կը ձեռնարկէ Լիբանանի միջազգային լուրերը:

«ՎԱՍՆՅ ՁԱՅՆ»-Ի ԼՈՒՐԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ Ժամը 8:30 - Լիբանանեան մամուլի գլխաւոր խորագիրները՝ ԱՐԱԲԵՐԵՆ Ժամը 9:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ՀԱՅԵՐԵՆ Ժամը 10:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ԱՐԱԲԵՐԵՆ Ժամը 11:30 - Լիբանանեան մամուլի գլխաւոր խորագիրներ՝ ՀԱՅԵՐԵՆ Ժամը 12:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ՀԱՅԵՐԵՆ/ամփոփ Ժամը 2:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ԱՐԱԲԵՐԵՆ/ամփոփ Ժամը 3:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ԱՐԱԲԵՐԵՆ Ժամը 4:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ՀԱՅԵՐԵՆ Ժամը 5:00 - Ելեք Խնդանք Ժամը 5:45 - Աստղեր Ժամը 6:00 - Գրական յայտագիր Ժամը 6:30 - «Մարտի պահեց հայերը» Շահանդուխտ Ժամը 7:00 - HIT PARADE Ժամը 7:30 - Հարցազրույց՝ Շայ Ալետ. Թորոնտեան վարժարանի տնօրէնուհի Տիկ. Սեդա Գարակոզեանի եւ բեմադրիչ - թատերագիր պրոֆ. Ռոպերտ Առաքելեանի հետ. Գիւր՝ «Խելացի Մարդը» թատերախաղը. Ժամը 8:00 - Գուսան Ժամը 8:30 - Ելեք Խնդանք (կրկնք.) Ժամը 9:00 - Ռազմիկ

ՆԱՍԱԿ ԸԱՅՐԵՆԻՔԵՆ

ԱՆՀԵԹԵԹ ՎԻՃԱԿ

Իրրեւ սիւնակագիր, որ ունի թեմաներու յստակ շրջագրի, կրնայի անտեսել, աշխարհացունց իրադարձութիւնները ու գրել Սուրէնական գիւղին մասին, գրել, թէ ինչպէս քաղիքորնիհաւա խումբ մը մարդիկ արագիւններու բոյններու հարեւանութեամբ ու Արաբատի գրեթէ փէշերուն ապրող այդ գիւղացիներու կեանքը կ'ուզեն բարելաւել: Այդպէս ծրագրած էի, այս շաբթուան նիւթս այդ պիտի ըլլար:

Այդ նիւթը պիտի յետաձգեմ աւելի հանգիստ օրերու, յուսամ եկող շաբթուն իսկ, աղօթելով, որ այս մղձաւանջը շուտով վերջ գտնէ ու պետութիւնները իրենց հզօրութեան համապատասխան խելամուտութեամբ շարժին՝ խնայելով հազարաւոր մարդկային անհեթեթ կորուստներ:

Անձնապէս խաղաղասէր մը չեմ: Արցախեան ազատամարտին ու Հայ Դատի պահանջատիրութեան պայքարին գործուն մասնակցութեան հետեւեալը միշտ այ խանդավառած է զիս:

Ուրեմն ինչու՞ այս անհանգստութիւնս, աւելի ճիշդը՝ շշմարտութիւնս:

Արարական աշխարհին ու անոր ընկերային թէ՛ ազգային դատերուն հանդէպ համակրանքս կը հաստատեմ: Ամէն տեսակի բռնատէրերու հանդէպ զղուանքս ուժեղ կը մնայ աւելի քան երբեք: Ամերիկայի Միացեալ Նահանգները կը յարգեմ իրրեւ ժողովրդավարութեան ամուր բերողը մէկը, անոր թերացումներուն դէմ պայքարելով այդ համակարգի ընձեռած հնարաւորութիւններով, ազատ խօսքով, քուէով, ցոյցով: Այս երկրին շնորհներն ալ վայելած ըլլալուս անչափ գիտակից եմ ու երախտապարտ: Հետուն մղուող այս պատերազմը, սակայն, հիմնովին խանգարած է զիս: Չեմ հասկնար անոր իսկական դրդապատճառը, չեմ հասկնար զայն սկսողներուն հետապնդած նպատակը, չեմ կրնար նուազագոյն իսկ գաղափար կազմել, թէ ինչ տեսակի աշխարհակարգ պիտի ժառանգէ քաղաքական երկրագունդը այս պատերազմի աւարտին:

Ցտակ է միայն մէկ բան: Միարեւեալ աշխարհի գրուածքը արդէն իսկ ցոյց տուաւ իր սնանկութիւնը: Միակ գերտէրութիւնը, յանձինս իր այսօրուան դեմակար խումբին, չկրցաւ յաղթահարել ուժի գայթակղութեան եւ զանցելով ամէն տեսակի ինքնագոյնութիւն արգելանքներ՝ իր իսկ լաւագոյն զաւակները նետեց արեւնայի արկածախնդրութիւններու մէջ:

Աշխարհի ամէնէն հզօր պատերազմական մեքենան ունեցող երկիրը, սակայն, բանակներու աւանդական շարժումներով, ռազմավարական ահարկու հարւածներով դժուար թէ կարենայ ծուռկի բերել սեփական ձախաւերութիւններով, կարճատես, շահախնդիր, խիստ կողմնակալ քաղաքական կեցողութեանով իր դէմ հակադրուած, իր դէմ մոլորեցած անթիւ մարդոց, որոնք ամէնուրեք են, որոնց ուրուականներէն սարսափած կ'ապրի այսօր Ամերիկայի ամէնէն խուլ անկիւնը ապրող անմեղ աշխատաւորը կամ գիւղացին:

Սովորական պատերազմ չէ ասիկա, հակադիր ճակատներով պետութիւններու կռիւ չէ: Եթէ այդպէս ըլլար, իրաքի բռնատիրական վարչակարգը առաջին իսկ վայրկեանին կը փլուզուէր աւելի արդար եւ աւելի ուժեղ դիրքերէ խօսող ու յարձակող այսպէս կոչուած համախմբուած երկիրներու բանակներուն առջեւ: Ամերիկեանգլիական ահարկու ռազմական ուժին կուրծք տուողը անհատական ու հաւաքական այն գիտակցութիւնն է, որ կ'ուզէ հաստատել ինքզինք ի դէմս իր գաղափարական ու արժեքային համակարգը նուազագոյնը ու քամահող ուժին, որուն մարմնաւորումն ու խորհրդանիշը դարձած են Ամերիկայի Միացեալ Նահանգները:

Միւս կողմէ, ինքնահաստատման այդ մաքրամաքուր մղումը անշուշտ շատ դիւրութեամբ կ'օգտագործուի տաղանդաւոր շարարմատներու մուտք ու ճիւղալիսի ծրագրները իրականացնելու համար՝ անթիւ անմեղ մարդոց կեանքեր խլելու դաժան զէնքի վերածելով զայն: Վկայ՝ Սեպտեմբեր տասնմէկի ահաւոր ողբերգութիւնը:

Ամերիկայի մշակութային կայսրութեան սահմաններէն դուրս գտնուողներուն համար, ըլլան անոնք այլ դաւանանքներու ու սովորութեանց տէր խաղաղ ու խաղաղասէր մարդիկ, թէ յանձնառու մտաւորականներ ու մարտիկներ, իրաքի սահմաններէն ներս տեղի ունեցող պատերազմական գործողութիւնները դժուար թէ նկատեն ահաբեկչութիւնը աշխարհի երեսին սրբելու կոչուած միջոց: Ընդհակառակը, անոնք գիտեն, որ այս տեսակի կամալական քայլերն են, որ կը ծնին նոր հակազդեցութիւններ, նոր շարժումներ, յաճախ այլ՝ նոր ու աւելի անգութ ոճերային խմբակցութիւններ, որոնք իրենց յանցագործութիւններուն ազնիւ ու վեհ հանդերձանք տալու իսկ կը համարձակին:

Այս պատերազմին մօտալուտ աւարտ եւ դժբախտարար չեմ տեսներ: Ուշ կամ կանուխ իրաքի մէջ թերեւս կարելի ըլլայ նոր կացութիւն ստեղծել, սակայն մինչեւ որ մէկ նոր աշխարհակարգ չկարգաւորէ հզօրներուն նկրտումները, իրաքին կրնան յաջողել ուրիշ տագնապներ, ուրիշ պատերազմներ, նոյնքան եւ աւելի անհեթեթ:

Նման աշխարհակարգի մը ստեղծման նախապայմանները արդէն կան:

ԱԲՕ ՊՕՂԻԿԵԱՆ

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՌԻՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»-ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումի բնագիրը ընթերցի գիրով (հաստատութեանց պարագային)՝ նախընտրաբար պաշտօնակաւսն թուղթի վրայ, եւ՝ հաստատուած՝ ներկայացնել «Ազդակ»-ի ծանուցումներու գրասենեակը:

ԵՐԿՆԱՅԻՆ ԿԱՐԱԲԱՆ

Բնութիւնը պաշտօններէն մէկն եմ ես:

Յաճախ գմայլած եմ արչալոյսին, մայրամուտին, անձրեւին, որոտումին... Միրած եմ ծաղիկներն ու աշնան չոր տերեւները, ինչպէս նաեւ՝ անոնց խշխշոցը: Սակայն չէի տեսած բնութեան այն հրաշալիքը՝ արագիւններու երամբ, որ տարօրինակ ապրումով ողողեց հողին:

Մանկութեանս ոգարոցը շատ խօսած են անոնց մասին, երբ որ բանաստեղծութիւններ ստրվեցուցած են մեզի:

Յաճախ լսած եմ, որ մեր ազգը նման է այդ թռչունին:

Սակայն ամբողջական ծանօթութիւն մը կամ տպաւորութիւն մը չէի ձգած վրաս: Նոյնիսկ ընդվզած էի ուսուցիչներուն դէմ, որ փոխանակ առիւծ արքային կամ արծիւի նմանցնելու, խեղճուկ թռչունի մը կը նմանցնեն մեզ:

Ի՞նչ ընեմ ես, թէ ան իր բոյնը կը շինէ սէզ օգուտ, երբ քամիները ներկայ են միշտ: Չէ՞ որ մեր սարերն ալ բարձր են, անառիկ են, բայց հակառակ այդ բոյնին՝ գերբարձրուած:

Այսպէս կը մտածէի նախապէս:

Նստած կը կարդայի, երբ պատահաբար աչքերս յառեցի պատուհանին կողմը ու տեսայ զարմանալին, հրաշքը, արագիւններու երամբ...

Իսկայն լսեցի կարծես «Բարի արագիւնը»: Քանի մը վայրկեան



րածելով ամէնուրեք, ապա աղեղնածէշարքը շտկելով ու երկարելով իրրեւ գարնան գինուորները՝ կը շարունակէին իրենց սլացքը բաց երկինքին մէջ:

Բարի գալուստ կը մաղթէի, քիչ ետք՝ բարի ճանապարհ: Երանի՛ կու տայի անոնց, որոնք թերեւս Հայաստան կ'երթային, առանց անցարդելի:

Կը մաղթէի, որ շուտ ու դիւրութեամբ շինեն իրենց բոյները: Իրենց հետ

այդպէս դիտեցի ու աչքերս յառեցի շինութիւններէն շարունակուող կարաւանին՝ հարց կու տայի ես ինձի, թէ ուրկէ՞ կու գային անոնք, ո՞ւր կանգ պիտի առնէին արդեօք:

Որքան անոնց թիւը աճէր տեսողութեանս սահմաններուն մէջ, որքան երկինքին մէջ հրաշքի շարժանկարը ընթանար, այնքան լսելի կը դառնային կարծես զմայլելի այն թռչունին մասին հիւսուած երգերը:

Հիասքանչ ակնարկս անկարող բաժնելէ այս սաւառնող հրաշքէն, կը զարմանայի նաեւ, թէ ինչպէս երամ-երամ կը բոլորուէին անոնք իրենց առաջնորդին շուրջ: Արագիւններու երամը երկինքներէն երկրին մօտեցած՝ կը խռնուէին մօտակայքը՝ իրենց օրհնաբեր կափկափիւնը տա-

խաղաղութիւն սփռեն ամբողջ աշխարհին, օրհնութիւն՝ հայրենիքիս, երջանկութիւն՝ արիւնակիցներուս ու իրենց ներկայութեամբ գեղեցիկ ու անցաւ գարուն մը ընծայեն Հայաստան աշխարհին:

Վստահ էի, որ երբ անոնք հասնէին Հայաստան ու ձայն տային մեր սարերուն ու ձորերուն, Հայաստանի գունազարդ գարունը պիտի տարածուէր ամէն կողմ, ծաղիկները պիտի ծլէին, բնութիւնը պիտի արթննար իր թմբիրէն ու մայր հողը ծնունդ պիտի տար շնչաւոր ու անշունչ նոր գեղեցկութիւններու:

Միրելի՛ արագիւններ, մենք թերեւս նման ենք իրարու, բայց դուք ինձմէ աւելի բախտաւոր էք...

ԾՈՎԱԿ ՍԵՊԵԱՆ

«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՌՆԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ  
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հետաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

CASIO. The World Of Silence...It's CASIO's Solution! Quality Durability Dependability. TK-T200 Electronic Cash Register. TE-2000 Electronic Cash Register. TE-100 Electronic Cash Register. Sole Distributors in Lebanon: CASIO COMPUTER CO.,LTD. Tokyo, Japan. Fanar-Phone: 01/897710 - 891785 - 895122 - New Jdeideh-Phone: 01/899903 - 883550 E.MAIL : eos@dm.net.lb - Fax : 01/897711 - P.O.Box : 165212 Ashrafieh - Lebanon


ՊԱՔՈՒ ԴԺԳՈՂՆ ԿԵՑՈՒԱԾՔԵՆ... «Արմինֆօ» լրատու գործակալութիւնը կը տեղեկացնէ, որ լրագրողներու հետ առաջին մը ընթացքին Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար Վիլայէթ Կուլիյե կարծիք յայտնած է, որ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի վերընտրութեան կապակցութեամբ թուրքիոյ նախագահ Ահմէթ Նեքտէթ Սեգերի յղած շնորհաւորական ուղերձը առնուազն տարակուսանք կը յարուցէ: Ազրպէյճանի արտաքին գործոց նախարարը աւելցուցած է. «Հաւանական է, որ թուրքիոյ ղեկավարութիւնը դուրս եկած է արձանագրութեան կանոններէն, սակայն նոյնիսկ այդ պարագային Անգարայի քայլերը կարելի չէ բացատրել նախ այն պատճառով, որ Քոչարեան ծանօթ է իր հակաբուրք դիրքորոշումով միջազգային հանրութեան կողմէ Հայկական Ցեղասպանութեան նշանակալից նշանակումը է»: Պատասխանելով Ազրպէյճանի արտաքին գործոց նախարարին՝ Ազրպէյճանի մէջ թուրքիոյ դեսպան Ունլի Չելիքլեօզ «սովորական փորձորոյնային ընթացակարգ» նկատած է Սեգերի կողմէ յղուած ուղերձը՝ ընդգրծելով, որ անհիկա ոչ մէկ քաղաքական իմաստ ունի: Միեւնոյն ժամանակ թուրքիոյ դեսպանը յայտարարած է, որ Սեգերի ուղերձը պետք չէ որակել Երեւանի նկատմամբ թուրքիոյ վերաբերմունքի փոփոխութիւն: Նշեց, որ թուրքիոյ նախագահ Սեգեր անցեալ շաբաթ շնորհաւորած էր նախագահ Ռոպէրթ Քոչարեանի վերընտրութիւնը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ (ՀԵՀՈՍ) ՀԱՅ ԵԿԵՂԵՏԻՈՅ ՀԱՄԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՌԻՍԿՆՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԸԱՆԴԻՊՈՒՄ-ԶՐՈՅՑ Ե. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԵՏ \* Վեհափառ հայրապետը պիտի խօսի «Երիտասարդութիւնը նոր մարտահրաւերներու դիմաց» նիւթի շուրջ: Ապա վեհափառ հայրապետը պիտի պատասխանէ ներկայներու հարցումներուն: \* Տեղի կ'ունենայ Կիրակի, 30 Մարտ 2003, առաւօտեան ժամը 11:30ին, վեհարանի դահլիճին մէջ: \* Կը հրաւիրենք մեր համալսարանական ուսանողները մեր երիտասարդ - երիտասարդուհիները՝ ներկայ գտնուելու սոյն հաւաքին եւ լսելու վեհափառ հայրապետին պատգամը:

www.lemagan.com

ԱՅՀԻԼ AFHIL ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ RENT AND SALE AT HOME •Wheelchair •Walker •Electric Bed •Manual Bed •Water Mattress •Cans •Sticks •Serum Tripod •Walking Frame •Over Bed Table •All Kinds Of Oxygen We Also Provide •Laboratory service. •Physiotherapist •Nurses Aids •P.T.S. (AMBULANCE) HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

ՅՈՒՑԱՍԱՐԱԿ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՆԸՐԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ՝ ԱՅԿԻԼ, ԱՅԵՏԻ ԶԵԼԵ, Բ. ՅԱՐԿ ԵՏԻ (02) 242553/7 NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.



ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ԹՐԲԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՀԱՏՈՐ ՄԸ

Վերջերս հրապարակուած է Թուրքիոյ արտաքին քաղաքականութեան մասին ցոր գիրք մը «Թուրքիոյ ֆորթի փոխի ին էն էյն օֆ աքսըրքէյնիթի» (Թուրքիոյ արտաքին քաղաքականութիւնը՝ անորոշութեամբ յատկանշուող շրջանի մը մէջ): Ֆ. Սթիֆըն Լարայիլի եւ Իան Օ. Լեսըրի հեղինակութեամբ այս աշխատութիւնը տեղագրուած է Գան Բամա-ցանցի RAND կայքին մէջ (www.rand.org):

Գիրքը Թուրքիան կը ներկայացնէ շատ փայլուն, դրական պատկերով: Երկիրը կը գտնուի սրբաբազմ վերելքի ճամբուն վրայ: Անկախ Հայկական Ցեղասպանութեան եւ Հայաստանի շրջափակման հարցերէն, որոնք անտեսուած են, հեղինակները ժխտական իրաքանցիւր երեւոյթի գտած են արդարացում մը: Թրքական բանտերու մէջ չարչարանքի կիրարկումը, հեղինակներուն համոզմամբ, քաղաքական կամքի արդիւնք չէ, այլ՝ օրէնքներու յոռի կիրարկում: Նոյն տրամաբանութեամբ անցանկալի որեւէ իրողութիւն կամ անցեալի կը պատկանի եւ կամ անոր հետեւանքն է: Օրինակ, քիւրտերուն յատկացուած բաժինին մէջ կը պնդուի, որ Մուսթաֆա Քեմալ փափաքած էր, որ քիւրտերը ամբողջական թուրք քաղաքացիներ ըլլան, որեւէ տարբերութիւն չզգնելով քիւրտի եւ թուրքի միջեւ: Սակայն, կ'ըսուի գիրքին մէջ, քիւրտերը իրենք մերժած են այդ հաւասարութիւնը: Մերժելով հրաժարիլ իրենց իրաւատուութիւններէն: Հեղինակները անշուշտ չեն խօսիր Թուրքիոյ կողմէ 3000-4000 քրտական գիւղերու քանդումին, բիւրք քաղաքացիներու սպանութեան եւ անհետացումներուն մասին:

Հեղինակները կը թուեն Գան Թուրքիոյ միւս կողմանուորակները՝ հայերը, յոյները, հրեաները, առանց սակայն ճշելու, թէ անոնք ինչպէս ժամանակի ընթացքին թուական մեծ անկում կրած են կամ բոլորովին անհետացած են:

ԱԶԵՐԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՐՅԸ ԿԸ ՀԱՄՆԻ... ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ազրպէյճանական «Պաքու Թուտէյ» թերթը կը հաղորդէ, թէ «Ազրպէյճան-Շուէտ» յանձնարարութեան անդամ, շուէտացի երեսփոխան Օլէ Շմիթ վերջերս Միջազգայնական մէջ տեղի ունեցած Եւրոպական Միութեան խորհրդարանական նիստին ընթացքին անդադարած է ազերի գաղթականներու «ծանր» կացութեան: Թերթին համաձայն, նիստին ընթացքին Շմիթ Եւրոպական Միութեան խորհրդարանական Փօլ Նելսընէն բացատրութիւն պահանջած է Ազրպէյճանի նկատմամբ Միութեան տրամադրած օժանդակութեան մասին: Շուէտացի երեսփոխանը հարց դրած է, թէ Միութիւնը իր պիտոճէն որքա՞ն կը տրամադրէ «հայկական բռնազրաւումին» պատճառով գաղթական դարձած ազերիներուն:

Շմիթ իր ելոյթի ընթացքին խօսած է նաեւ Պաքուի մէջ ապրող գաղթականներու «գծուար պայմաններուն» մասին եւ կոչ ուղղած է Եւրոպական Միութեան անոնց նկատմամբ աւելի պատասխանատու ըլլալու: Շմիթ չեղտած է, որ Եւրոպական Միութիւնը պէտք է աւելի աշխուժ դեր խաղայ հայ-ազրպէյճանական հակամարտութեան մէջ: Ան պահանջած է, որ Միութիւնը բարելաւէ գաղթականներուն ընկերային պայմանները:

ԱՆՈՒՄԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ ՍՐԵՈՑ ՔԱՐԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ուրախութեամբ կը յայտնենք, որ այս Կիրակի, 30 Մարտ 2003ին, յատուկ համոզութեամբ պիտի նշուի Սրբոց Բառասնից Մանկանց Եկեղեցւոյ անւանակութեան տօնը:

Երգեցողութիւնը պիտի կատարուի եկեղեցւոյ «ՆԱՐԵԿԱՅԻ» երգչախումբին կողմէ, Եկմալեան քառամասնական եղանակով, խմբավարութեամբ ՊՐՆ. ԳԵՈՐԳ ՊԵՊԵՅԱՆԻ: Պատարագի աւարտին տեղի պիտի ունենայ մատաղի օրհնութիւնը:

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝ **ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ** (Բարեջան առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Առաջնորդ սրբազան հայրը պիտի ժամանէ առաւօտեան ժամը 9:15ին: Ան «Արաքս» փողոցի մուտքին պիտի արժանանայ ժողովրդային ընդունելութեան, ապա թափօրով պիտի առաջնորդուի եկեղեցի:

Կոչ կ'ուղղենք մեր հաւատացեալ ժողովուրդին՝ դիմաւորելու առաջնորդ սրբազան հայրը, ներկայ ըլլալու Սուրբ եւ անմահ պատարագին եւ հաղորդուելու օրուան պատգամով:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՐԵՈՑ ԵՍՈՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

www.aztagdaily.com

«ՀԻՆ ԶՈՒՂԱ. ԿՈՐՍՈՒԱԾ ԳԱՆՁԵՐ» ԳԻՏԱԺՈՂՈՎ

